№ 91 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 1 — 1902 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 1 № 91

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսկական փոխառութիւնները.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրաշարժից վնասվածների օգտին. Թող կորչի մօրալը. Պասխալօվայի ներկայացումները. Նամակ Ախալքալաքից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի լրագիրներից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Պարսից Շահի գալստեան առիթով մենք նուիրեցինք մի քանի նկատողութիւններ Պարսկաստանին և պարսկահայերին։ Մենք հաղորդեցինք, որ Պարսկաստանը իր վրա է դարձրել եւրոպական պետութիւնների առանձին ուշադրութիւնը, որոնց թւում ամենամեծ շահեր և ազդեցութիւն ունեն Ռուսաստանը և Անգլիան։

Ռուսաստանը մի ամիս սրանից առաջ նորից տուեց Պարսկաստանին փոխարինաբար մի խոշոր գումար, որի տոկոսները և ամբողջութիւնը պէտք է ապահովվեն Պարսկաստանի մաքսային հարկերով։ Դա երկրորդ փոխառութիւնն է, որ անում է Պարսկաստանը Ռուսաստանից։ Առաջին փոխառութիւնը կատարվեց 1900 թւականին $22^1/_2$ միլիոն ռուբլու, իսկ ներկայ փոխառութիւնը արված է 10,000,000 ռուբլու։ Փոխառութեան համար սահմանված է 5%։ Ապահովութեան համար նշանակված մաքսային հարկերը վերաբերում են հիւսիսային Պարսկաստանին. իսկ ինչ վերաբերում է Պարսից ծոցի ծովափի երկիրներին և Ֆարսիստանին՝ այն տեղերի մաքսատները գտնվում են անգլիական ազդեցութեան շրջանում։

Մեր յիշած երկու փոխառութիւնները ուժեղացրել են Ռուսաստանի դիրքը Պարսկաստանում։ Ինքն ըստ ինքեան $32^1/_2$ միլիոն ռուբլի պարտքը մեծ գումար չէ մի պետութեան համար։ Եւ Պարսկաստանը այնքան բեղմնաւոր հող և առատ բուսականութիւն ու հարուստ հանքատեղեր ունի, որ կարող է աւելի ևս մեծ փոխառութիւնների մասին երազել։ Սակայն իր ներկայ դրութեան մէջ Պարսկաստանը դժուարանում է և այդպիսի փոքր պետական պարտքը ծածկելու։ Երկիրը բարեկարգված չէ և նրա բնական հարստութիւնները մնում են թմրած և քնած դրութեան մէջ։

Մենք յայտնել էինք, որ Պարսից կառավարութիւնը համակրութեամբ է վերաբերվում կուլտուրական առաջադիմութեան խնդիրներին և սկզբնական փորձեր է անում նոր քայլեր անելու եւրոպական կուլտուրայի շաւիղներով։ Սակայն մեծ և արդիւնաւէտ հեռանքների հասնելու համար անհրաժեշտ է, որ կուլտուրական այդ փորձերը կատարվեն մեծ չափով և աւելի համաձայն կերպով, քան մինչև այժմ։ Փոխառութիւնների մեծ մասը պէտք է գործ դրվէր կուլտուրական նպատակների վրա։ Այն ժամանակ եղած ծախքերը շուտով յետ կը վերադառնային և կառաջացնէին բարերար հեռանքներ։ Իսկ եթէ նրանք կը ծախսվեն բոլորովին կողմնակի և ապարդիւն գործերի վրա, այն ժամանակ նրանք կորած գումարներ կը լինեն, որոնք կանհետանան առանց որևէ էական օգուտ տալու երկրին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Երկրաշարժից վնասվածների օգտին ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները.

Ներքին-Ագուլիսից, տիկին Սաթենիկ Ոսկանեանցի եւ օր. Աշխէն Տէր-Պողոսեանի միջոցով ժողովված 47 ր., որ նուիրել են հետեւեալ անձինք. տ.տ. Բ. Ոսկանեան, Ս. Ոսկանեան, տիրուհի՝ Ե. Տէր-Գրիգորեան, տ. Ա. Աւետիսեան, օր. Ա. Տէր-Պողոսեան—5-ական ր.։ Տ. Վ. Աղամալեան, Մի տիկին—3-ական ր.։ Տ.տ. Մ. Մակինցեան, Զ. Ստեփանեան, օր. Մ. Ոսկանեան, Ա. Աւետեան, տ.տ. Ս. Մանուէլեան, Գ. Նուսնուսեան, Ա. Մկրտումեան, Ե. Կիրակոսեան, Ե. Մակարեան, Ռ. Տէր-Աստուածատուրեան, Վ. Թումանեան, Հ. Բոլիբէգեան—1-ական ր.։ Ազին 90 կ.։ Օր.օր. Ե. Թովմայեան 70 կ.։ Ն. Սարուխանբէգեան, Մ. Թումիեան, տ.տ. Գայիանէ Նազարեան, Գ. Աբրահամեան 50-ական կ.։ Լ. Ղուկասեան 40 կ.։ Գումարն է 47 ռուբլի։

Փոքր-Սալա գիւղից 10 ր. 50 կ.։

Բասէնի Բաշ-գիւղից, Գ. ք. Տուրփայեանից, 21 ր. 70 կ., որ ժողովված է հետեւեալ անձերից. Ե. Բարսեղեան 5 ր., Чебасъ 3 ր., С. Каменевъ 2 ր., Պ. Մարկոսեան 2 ր., Ա. Քեանդարեան 2 ր., В. Павлевско, Փ. Պալասանեան, Н. Монашенко—1-ական ր., Ե. Պետրոսեան, Գ. Անտոնեան—25-ական կ.։ Բաշ-գիւղի եկեղեցում ժողովված դանձանակ 2 ր. 50 կ., Թ. Գասպարեան 50 կ., Արսէն 20 կ.։ Գումարն է 21 ր. 70 կ.։

Արմաւիրից, Գ. ք. Սէֆէրեանից, 141 ր., որ նուիրել են հետեւեալ անձինք. Ա. Գասպարեան 3 ր., Մ. Դանեան 1 ր., Դ. Ց. Ունանեան 100 ր., Գ. Կիրակոսեան 3 ր., Տ. Շահնազարեան 1 ր., Կ. Ղազարեան 1 ր., օր. Վ. Սէֆէրեան 3 ր., օր. Մ. Սէֆէրեան 3 օր., տ. Թ. Սէֆէրեան 5 ր., օր. Ս. Սէֆէրեան 5 ր., Ա. Սէֆէրեան 10 ր., Գ. ք. Սէֆէրեան 5 ր.։ Գումարն է 141 ր.։

Ընդամենը 220 ր. 20 կոպէկ։ Իսկ նախկին ստացվածների հետ միասին 8627 ր. 34 կ.։

«ԹՈՂ ԿՈՐՉԻ՝ ՄՕՐԱԼԸ»

(Նամակ Բաղուից)

—

Ս. Պետերբուրգի «Ֆարս» Сверхъ-Театръ-ի գաստրոլները մեզանում տենդային իրարանցում են առաջ բերել։

Ամենքը դլխապատառ դէպի թատրոն են վազում, օր առաջ վայելելու Սաբուրովի մայրաքաղաքից բերած հաճոյքները։

Ծերունի եւ երիտասարդ, մարդ ու կին—ամենքն էլ հետաքրքրված ու ոգեւորված են։

Ի՜նչ առաջարկութիւններ, ինչ փոխադարձ հրաւէրներ...

Տոմսակ չը կայ.

Մարդիկ գլուխ են պատռում տոմսակի համար։

Ապշեցուցիչ երեւոյթ։

Մեր հասարակութեան՝ դէպի թատրոն ուղեցած անտարբերութեան ծանօթ մարդը շուտ է՝ տեսնելով այսպիսի բուռն ոգեւորութիւն եւ խանդաղատանք բեմի վերաբերմամբ։

Օ՜, «Ֆարսը» հայկական թատրոն չէ, եւ այնտեղ չեն ներկայացնում—«Ուրիէլ-Ակոստա», «Ֆին»; «Դոկտոր-Շտոկման», «Պէպօ», այլ—«Пеленки», «Ночь госпожы Монтессонъ», «Клубъ обманутыхъ мужей», «Кокоша и Тотоша», բոլոր ֆարսերի արքայ «Дама отъ Максима» եւ այլ կաֆէ-շանտանային պիեսներ։

Եւ հունձը փառաւոր է։

Սրանից մի-երկու օր առաջ ներկայացնում էին «Пеленки», «Ночь госпожи Монтессонъ» պիեսները։

Այդ օրվայ յայտարարութեան մէջ ասված էր. «Թատրոնի դիրեկցիան խնդրում է հասարակութեանը՝ երեխաներին եւ աշակերտներին իրանց հետ թատրոն չը բերել»։

Յայտարարութեան մէջ մի այսպիսի տող աւելացնել—նշանակում է խելքահան անել Բաղուի «գեղարուեստասէր» հասարակութեանը։

Եւ իրաւ...

Ես պատահմամբ ներկայ էի երկու՝ բարձր կրթութիւն ստացած երիտասարդների խօսակցութեանը։ Նրանք շատ ոգեւորված էին։ Խօսում էին «Ֆարսի» բարոյականի մասին։ Նրանցից մէկը ի միջի այլոց թոյլ տուեց իրան հետեւեալ խօսքերը.

«Ես մօրալ չեմ ճանաչում եւ բոլոր մօրալիստներին համարում եմ յիմարներ։

Խոստովանում եմ. հետաքրքիր էր ծանօթանալ այն վայրի հետ, ուսկից նրանք քաղում էին իրանց ոգեւորութիւնը...

Ես տոմսակ գնեցի եւ առաջին անգամ ներկայ եղայ «Ֆարսի» ներկայացումներին։

Ամբողջ Բաղուն այդտեղ էր։

Բուրժուաներ, դիպլոմաւոր արհեստաւորներ, երիտասարդներ եւ խորին զառամութեան հասած ծերեր—ամենքը իրար էին խառնվել։

Երեւի ամենքն էլ եկել էին թքելու խեղճ մօրալի վրա։

Մարդ ակամայ յիշում է հայոց խեղճ թատրոնի դատարկ կասան, նրա անձնազոհ դերասաններին եւ մեր անգրագէտ բուրժուազիայի գեղարուեստական մեծ մեծ պահանջները...

Տխուր մտածմունքների տակ ես հեռացայ թատրոնից։

Մթթէ իսկապէս մեր հասարակութեանը կաֆէ-շանտաններ են հարկաւոր։

Բաղուեցի

ՊԱՍԽԱԼՕՎԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Մենք ծանօթացրինք մեր ընթերցողներին այն ներկայացումների հետ, որոնք տրվեցին Թիֆլիսի Արտիստական ընկերութեան թատրոնում տիկին Պասխալօվայի մասնակցութեամբ։ Այժմ այդ ներկայացումները ժամանակաւորապէս, մի շաբաթով, ընդհատված են եւ յետոյ դարձեալ կը շարունակվեն։

Եղած ներկայացումները արդէն բաւական նիւթ են տալիս մի քանի ընդհանուր եզրակացութիւններ անելու չնորհալի դերասանուհու եւ ամբողջ խմբի խաղի մասին։ Մենք այդ կանենք մի առանձին հաճոյքով, որովհետեւ մենք գործ ունենք դրական հետեւանքների հետ։

Մինչեւ այժմ տեղի են ունեցել ութ ներկայացում։ Խաղացել են հետեւեալ պիեսները. Զուդերմանի՝ «Ցոշնանեան գիշերվայ կըրակները». Պոտապենկոի՝ «Դիւթական հեքիաթ» (երկու անգամ). Օստրովսկու՝ «Փոթորիկը». Տիմկովսկու՝ «Защитникъ». Զեխովի՝ «Дѣдя Ваня». Օստրովսկու «Безприданница» եւ Նեմիրովիչ-Դանչենկոի՝ «Կեանքի արժէքը» պիեսները։

Տիկին Պասխալովա խաղում է Թիֆլիսի Արտիստական ընկերութեան սիրողների հետ, որոնք ձմեռվայ ընթացքում կամաւոր կերպով մասնակցում են ներկայացումներին։ Այդ մասնակցողների մէջ կան այնպիսիները, որոնք արդէն 5—10—12 տարի շարունակ վարժվում են բեմական արհեստի մէջ եւ ձեռք են բերել աչքի ընկնող դերասանական հմտութիւն եւ կարող

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏ ԺԱՄԵՐ

—

Ֆէմինիստական նորութիւններ

Իւրաքանչիւր երկրում, որտեղ սովորութիւն է միայն գրել կարդալու արհեստը՝ կինը, երկարատեւ եւ իր ոյժերից բարձր կռիւներ մղելուց յետոյ, կարողացաւ, վերջապէս, ձեռք բերել իր մարդկային իրաւունքները, բանալ տալ իր առաջ դպրոցի դռները եւ բռնել հասարակութեան մէջ պատուաւոր տեղ։

Ոտնակոխ անելով դարաւոր նախապաշարմունքները, ուշ չը դարձնելով հասարակութեան տգէտ ու խաւար դասակարգի անհիմն կարծիքների վրա, կինը այսօր առաջ է գնում արդէն հարթված ճանապարհի վրա հաստատ, անսայթաք, հսկայական քայլերով։

Մի քանի տարի առաջ մենք զարմանում էինք կանանց շարժման վրա, կասկածոտ, մինչեւ անգամ խորթ աչքով էինք նայում կանանց խնդրի վրա։ Մի-երկու տարի առաջ մենք կարողանում էինք մատով ցոյց տալ այս կամ այն երկրում, այս կամ այն ազգի մէջ լոյս ընկնող ինտելիգենտ կամ ուսումնական կնոջ վրա։

Իսկ այսօր...

Դուք ունէք կամ ունեցել էք անշուշտ մի ծաղկանոց, որտեղ անկած կան բազմազան թուփեր։ Գարունը վրա հասած՝ դուք մտնում էք ծաղկանոց եւ անհամբեր աչքերով որոնում էք բացված ծաղիկներ։ Բայց դեռ վաղ է։ Ձեզ դիմաւորում են կանաչ վերարկուների մէջ պինդ փաթաթված կոկոններ։ Քանի օրից յետոյ մտնում էք երկրորդ անգամ, եւ տեսնում էք այս կամ այն թփի վրա արդէն բացված մի վարդ։ Հրճվում է ձեր սիրտը, եւ դուք խորին ակնածութեամբ մօտենում էք նրան, խոնարհվում դէպի նա եւ, առանց ձեռ տալու, հոտոտում։ Վերջապէս երրորդ անգամ ծաղկանոց մտնելով դուք, միանգամայն յափշտակված, չէք կամենում հաւատալ ձեր աչքերին... Բազմատեսակ, բազմերանգ բացված ծաղիկների հիասքանչ տեսքն ու անուշահոտ բուրմունքը վայրկենապէս կախարդում են ձեր ամբողջ էութիւնը։ Դուք սպասում էիք, որ երեկվայ բացված վարդին այսօր էլ կը հետեւի մեխակը միայն։ Դուք երբէք չէիք կարող երեւակայել, որ ծաղկանոցի զանազան տեղերում եւ անկիւններում միանգամից կը բացվէին երեկվայ փոքրիկ, դեռ կանաչ կոկոնները ընդ ամենը մի գիշերի մէջ։ Եւ այս հաճելի անակնկալութիւնը լցնում է ձեր սիրտը անհուն քաղցր զգացմունքներով։

Նոյն երեւոյթը տեղի ունեցաւ եւ կանանց էմանսիպացիայի նկատմամբ։

Թէ ինչ է եղել կինը մինչեւ այսօր տղամարդի կողքին, տղամարդի համար, այդ մասին շատ է խօսվել, շատ է գրվել։ Այդ գիտեն ամենքը եւ իւրաքանչիւրը։

Այժմ «Ֆէմինիստական նորութիւններ» խորագրի տակ իմ ցանկութիւնս է ձեր առաջ դնել ժամ ժամի վրա բացվող ծաղիկների մի հարուստ ժողովածու, ազգերի համար պարծանք կազմող, իսկ, մանաւորապէս մեզ, հայերիս համար իբրեւ օրինակ ծառայող կանանց եւ նրանց արդիւնաշահ գործերի ցուցակը։

Եւ որովհետեւ կնոջ արած ամեն մի քայլը զուտ լուսաւորութեան ճանապարհի վրա, կնոջ արած ամենափոքր շարժումը դէպի զուտ առաջադիմութիւն ես համակրում եմ ամբողջ սրտով եւ գնահատում շատ թանգ, ուստի որ երկրագի էլ ուզում է թող լինի այդ կինը, որ ազգի էլ ուզում է թող նա պատկանի,—նրան ես պատուաւոր տեղ կը տամ իմ ցուցակի մէջ եւ կը ներկայացնեմ մեր հասարակութեանս։

Ո՞րտեղից եւ ումնից սկսել—այդ բոլորովին միեւնոյն է, ի հարկէ։ Սկսենք նոյն-իսկ հէնց առաջին պատահածից։

Շվէյցարական համալսարաններում տասն եւ հինգի չափ կանայք այսօր վարում են զանազան պաշտօններ. չորսը նրանցից պրիվատ-դոցենտներ (դասախօսներ) եւ այլն։ Առաջին կինը, որ Շվէյցարիայում արժանացաւ ամբիոնի, եղաւ իրաւաբանութեան դոկտոր Էմիլիա Կեմպին։ Ցիւրիխի բարձրագոյն դպրոցում Նա կարդաց հռոմէական իրաւագիտութեան մասին։

Բերլինում ահագին աղմուկ է հանել այն հրաւէրը, որ ստացաւ իրաւաբանութեան դոկտոր Անիտա Աւգսբուրգ՝ խօսելու համար Կենիգսբերգի ժողովրդական ազատամիտ մասի ժողովում մի ճառ մաքսային նոր օրէնսդրութեան դէմ։

Երկրորդ դէպքը տեղի ունեցաւ Համբուրգում, որտեղ, դարձեալ քաղաքական մի ֆերէյնի հրաւէրով, տ. Հէյման կարդաց մի շատ ազդու զեկուցում կնոջ դերի մասին՝ հասարակական կեանքի մէջ։

Բելգիայում գոյութիւն ունի «Բելգիական կանանց միութիւն» անունով մի ընկերութիւն, որը սարքել էր վերջերս մի գրական երեկոյթ Վերվիերում՝ մարդկութեան ահեղ թշնամիներից մէկի—ալկոհոլիզմի դէմ պրոպագանդ անելու համար։

Օր. Պարէն, որ յանձն էր առել գլխաւոր ճառախօսի դեր, մեծ հաճոյք պատճառեց հանդիսականներին։ «Կանանց թշնամին» բնաբան առած՝ պերճախօս օրիորդը կենդանի կերպով պատկերացրեց ալկոհոլից առաջացող բազմատեսակ հիւանդութիւնները, որոնցից աւելի շեշ-

էին թատրոնական խմբերում գնահատելի ոյժեր լինել ամեն տեղ. միւսները սկսնակներ են եւ աջողութիւն ունեն միայն որոշ դերերում։ Արհեստի թերութիւնը մասամբ լրացվում է այն ջերմութեամբ, ոգեւորութեամբ եւ մտերիմ վերաբերութեամբ, որ ունեն մասնակցողները դէպի գործը։

Իսկ հիւր դերասանուհու ամենամեծ արժանաւորութիւնն այն է, որ նա միացրել է երկուսն էլ—դերասանական գեղեցիկ եւ մշակված տեխնիկան՝ զգացված եւ ներշնչված խաղի հետ։ Տիկին Պասխալովան գրաւում է հանդիսականին ոչ էֆֆեկտներով, ոչ կանացի աչքի ընկնող գեղեցկութեամբ, ոչ առատ ժպիտներով՝ ուղղված դէպի ծափահարող հասարակութիւնը։ Նա տպաւորութիւն է գործում իր հարազատ խաղով։ Բնական բարեմասնութիւնները նրա գեղեցիկ հասակն է եւ կազմուածքը, արտայայտիչ աչքերը եւ մաքուր ձայնը։ Այնուհետեւ բոլորը նրա շնորհքն է, նրա աշխատութեան, նրա ուսումնասիրութիւնների արդիւնքը։ Նրա խաղը ուսանելի է եւ հետաքրքրական։ Դուք կարող էք նրա խաղից ուսումնասիրել տիպերը բնորոշ գծերով։ Նա աշխատել է տիպեր վերստեղծել բեմի վրայ կենդանի յատկանիշներով։ Դուք կարող էք նրա հետ չը համաձայնել, բայց զգում էք, որ նա ամբողջացրել է այդ տիպերը, թափանցել նրանց էութեան մէջ։ Պասխալովան բեմի վրա ապրում է միայն այն անձնաւորութեամբ, որին նա ներկայացնում է, մտնելով նրա ոգու, նրա հոգեբանութեան մէջ։ Այդ պատճառով նրա խօսքը հնչում է անկեղծ տօնով, սրտառուչ ոճով։ Այդ պատճառով նա զբաղեցնում է հանդիսականին ոչ միայն այն ժամանակ, երբ նա խօսում է, այլ եւ երբ նա լուռ է եւ ուրիշներն են գործում ու խօսում։ Այդ պատճառով երկրորդական մանրամասնութիւնների մէջ նա փոխում է իր ձեւերը, երբ կրկնվում է պիեսը եւ որեւէ հանգամանք նոր դիրք է ստեղծում բեմի վրա, աչքի առաջ ունենալով միայն ներկայացրած տիպերը։ Պասխալովա չէ աշխատում է աւելի գեղեցիկ, աւելի էֆֆեկտով երեւալ, հագնվում է համապատասխան, գործ է ածում բնորոշ գրիմ, ներկայացնելով տգեղի դէմքը, թշուառի արտայայտութիւնը, մերժվածի վիճակը։ Արտասանում է պարզ, իմաստալից արտասանութեամբ, խելացի շեշտերով եւ այդ պատճառով նա, որքան էլ ցածր ձայնով խօսի, լսելի է թատրոնի հեռաւոր ծայրերում։ Մեր դերասանները շատ բան ունեն սովորելու Պասխալովայից, եթէ նրանք մտադիր են լուրջ կերպով ծառայել իրանց կոչման։

Մինչեւ այժմ տրված պիէսների մէջ Պասխալովա շատ աջող էր «Դիւթական հէքիաթի մէջ» Նատալիայի դերում, Զուդերմանի պիէսի մէջ Մարիկայի դերում, «Защитникъ»-ի մէջ Ելենայի դերում եւ «Փոթորկի» մէջ Կատարինէի դերում։ Նատալիայի դերի մէջ նա ամբողջ մի կեանք է ներկայացնում, մի մանուկի տիպ մինչեւ նրա հասուն անհատ դառնալը։ Մանկական ժպիտ, պատանեկական ցնորքներ, հիասթափում, անձնասիրութիւն, արթնութիւն—այդ բոլորը բնական կերպով հետեւում են միմեանց։ Մարիկայի դերի մէջ նա խոր զգացմունքի, թախիծի, անհուն վշտի մի ծով է ներկայացնում։ Ելենայի դերի մէջ նա ցոյց է տալիս մի կողմից սիրոյ անձնուիրութեան եւ ազնուութեան արտայայտութիւնը՝ զոհ գնացած ինքնասիրութեան զգացմունքի բռնկման եւ ներվայինի մի պայթիւնի, իսկ միւս կողմից այդտեղից առաջացած խորին տանջանքները։ «Փոթորկի» վերջին գործողութեան մէջ Կատարինէն հանդէս բերեց ջախջախված սրտի եւ յուսահատված հոգու մի սարսափելի տխուր պատկեր։ Պասխալովա թէեւ մեծ դեր ունի «Безприданница»-ի մէջ, Լարիսայի դերում, բայց նա չը տուեց մեզ ամբողջացրած եւ ըմբռնելի մի տիպ։ Մեր կարծիքով, Մարիկայի գրիմի մէջ նա աւելի պառաւ է ցոյց տալիս այդ աղջկան՝ քան հարկաւոր է։ Մարիկան միայն երեք տարով է մեծ Տրուդայից. բայց Պասխալովայի գրիմը նրան աւելի հասակաւոր է դուրս բերում։

Միւս դերասկատարներից յիշենք այստեղ տիկին Մարկսին, որ բաւարար խաղում է, լաւ արտասանում եւ աջող էր Շօրնիկովայի եւ Խաչիտայի դերերում. տիկին Վէյման «Дядя Ваня»-ի մէջ Ելենայի դերում, օրիորդ Խատիսովա անմեղ եւ անհոգ Տրուդայի դերում, տիկին Կարայեանի Մարիկայի մօր դերի մէջ. Պիտոեվա-Բելեցկայա Նատալիայի դերում «Защитникъ»-ի մէջ։ Տղամարդկանցից յիշենք Մակարովին, որ մեծ հմտութեամբ ընորոշ կերպով կատարեց թեթեւամիտ միլիոնատէր, իրան արիստոկրատ ձեւացնող Սբրուեվի դերը «Դիւթական հէքիաթի մէջ», հոգեվաճառ փաստաբան Մուրիսովի դերում «Защитникъ»-ի մէջ, այնուհետեւ Պարադօվի եւ մասամբ Վօյնիցկու դերերում։ Մարսով բաւական աջող կատարեց պրոֆէսորի դերը «Дядя Ваня»-ի եւ «Կեանքի արժէքի» մէջ։ Ամալին ընորոշ էր անանկացած քէփանոզի դերում։ Վէյման մասնակցում էր շատ ներկայացումների եւ աջողութեամբ կատարեց Տիխոնի դերը «Փոթորկի» մէջ, բժիշկ Աստրովի դերը «Дядя Ваня»-ի մէջ, Միխայլովի դերը «Защитникъ»-ի։ Եֆիմովիչ բաւարար է Կուդրեաչի դերում «Փոթորկի» մէջ։ Սեվսկիյ ատիճանաւոր Սբեդօբինի դերում «Դիւթական հէքիաթի» մէջ, Լարսկին ուսանողի դերում եւ այլն։

Տաղանդաւոր սիրող Օպօչինին դուրս եկաւ միայն մի դերում, որ նրա ամպլուայից չէր։

Ամենից թոյլ անցաւ «Կեանքի արժէքի» ներկայացումը, իսկ ամենամեծ աջողութեամբ «Դիւթական հէքիաթը», «Յոհնանեան գիշերվայ կրակները», «Փոթորիկը» եւ «Защитникъ»-ը։

Ներկայացումները, բացի մէկից, գրաւել էին բազմաթիւ հասարակութիւն։

Սիրող

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Ապրիլի 17-ին

Մօտ ժամանակներս Սախալինից վերադարձան երկու նախկին դատէջցիներ. երրորդն էլ շուտով կը գայ։ Այդ երեք հոգին մի ընտանիքից են եղել եւ մօտ 16 տարի սրանից առաջ մեղադրվել են մարդասպանութեան մէջ եւ դատաստանական վճռով դատապարտվել են տաժանակիր աշխատանքների։ Ժողովուրդը, ինչպէս այն ժամանակ, այնպէս էլ հիմա, համոզված է, որ այդ մարդիկ անմեղ են եւ զոհ են գնացել թշնամիների սուտ երդման եւ վկայութեան։ Ցայտնվել է նոյն իսկ, որ այն սպանութիւնը, որի համար մեղադրվել են անմեղ զոհերը, կատարվել է ուրիշի դրդմամբ, վարձված թուրքերի ձեռքով, որոնցից մէկը, սպանութեան համար ստացած փողը բաժանելու ժամանակ, սպանել է միւսին, ապա մի երրորդ սպանութիւն կատարելով եւ այդ պատճառով դատապարտվելով տաժանակիր աշխատանքների՝ խոստովանել է, որ իրանք են կատարել առաջին սպանութիւնը, որի համար դաշտէցիները զուր տեղը տանջվում են։

Այսպէս թէ այնպէս, այդ անմեղ զոհերը դատապարտվում են եւ աքսորվում Սախալին կղզին, ուր եւ կրում են իրանց պատիժը։ Ապա, կարծեմ մի նոր օրէնքի հիման վրա, վեց ամիս արձակուրդով գալիս են հայրենիք այն նպատակով, որ գիւղի համայնքի համաձայնութեամբ եւ կառավարութեան թոյլտուութեամբ նորից հաստատվեն իրանց հայրենի գիւղում։

Քաղաքացիների եւ գիւղացիների ահագին բազմութիւն դիմաւորեց նորեկ երկուսին։ Ես էլ տեսայ նրանց։ Դեռ ջահել, առոյգ եւ առողջ են։ Իրանց տիպը, լեզուն չեն կորցրել, չեն այլասեռվել, ընդունակ են աշխատանքի եւ կարող են կրկին վայելել ընտանեկան քաղցր կեանք, սերունդ մեծացնել եւ այլն։ Գիւղում հաստատվելուց յետոյ մտադիր են խաղաղ աշխատանքով վերականգնել իրանց տնտեսութիւնը, ընտանեկան կեանքը եւ թերեւս համայնքի օգտաւէտ անդամներ լինեն—ինչպէս իմացանք, իրանց գիւղումն էլ շատ լաւ են դիմաւորել եւ առհասարակ լաւ են վերաբերվում նրանց։ Ամբողջ Դատէջ գիւղը, նոյն իսկ նախկին թշնամիները, կէս գիշերին թափվել են նորեկների տունը՝ նրանց գալուստը շնորհաւորելու. հակառակորդները նոյն իսկ համբուրել են նրանց ու արտասվել...

Սակայն այդպէս չէր գրած «Մշակի» 76-րդ համարում տպված նամակում եւ ահա ինչու... Այդ դժբախտ մարդիկ ամուսնացած են եղել, բայց ամուսինները երկար սպասելուց յետոյ՝ ամուսնանում են ուրիշ գիւղացիների հետ։ Հիմա որ երկուսը վերադարձել են եւ երրորդն էլ պիտի վերադառնայ, այդ կանայք, ինչպէս ասում են, թերեւս եւ ցանկանային վերադառնալ իրանց նախկին ամուսինների տները, բայց որովհետեւ անկարելի է այդ բանը, հաշտվել են իրանց դրութեան հետ։ Վերադարձածները նոյնպէս հաշտվել են իրողութեան հետ եւ գիւղում հաստատվելուց յետոյ մտադիր են խնդիր տալ ուր հարկն է, որ իրանց էլ թոյլատրվի նորից ամուսնանալու։ Բայց այդ կանանց ծնողներն ու ազգական-բարեկամները եւ ներկայ ամուսինները՝ կասկածելով թէ նորեկները կարող են անհանգստութիւն պատճառել եւ խանգարել իրանց ընտանեկան կեանքը՝ ամեն կերպ աշխատում են նորեկներին կասկածելի դարձնել համայնքի եւ կառավարութեան աչքում եւ թոյլ չը տալ, որ նրանք վերահաստատվեն իրանց հայրենի գիւղում։ Վերադարձածներից մէկի նախկին աներորդին (նախկին կնոջ եղբայրը) վճռում է նոյն իսկ «Մշակում» տպված իր վերեւ յիշված նամակում զրպարտութիւն չը կայ մի առ մի առաջ բերել։ Շատանանք արձանագրելով եւ մի ժիր, հնարագէտ կնոջ, տ. Տէօնի, անունը։ Տեսնելով, որ Օսկոլի շրջականներում մաքուր եւ առողջարար ջրերից օգուտ կարելի է քաղել, նա մեծ աշխատանք եւ դրամական զոհաբերութիւններ անելով, տէր դարձաւ վերջիվերջոյ այդ աղբիւրներին։ Այժմ նա ինքը, տ. Տէօն, անձամբ շահագործում է այդ սառնորակ, ականակիտ ջրերը եւ յոյս ունի ձեռք բերել ժամանակով մեծ հարստութիւն։ Թէ որ աստիճան անգոհացուցիչ են մեզ մօտ ծառայող տարբ մատակարարող գրասենեակները, այդ քաջ գիտէ իւրաքանչիւրը մեզանից։ Ամեն ամիս, ամեն շաբաթ, մինչեւ անգամ ամեն օր տեղից տեղ փոխվող յանդուգն, խաբեբայ, գող եւ անառակ վարձկանների շնորհիւ ձեր նիստ ու կացը խանգարվում է ամեն ժամ, թունաւորվում է ձեր հացը ամեն րոպէ։ Օրէնքը անզօր է յաղթահարելու, ոստիկանութիւնը միջոցներ չը գիտէ սանձահարելու այդ բիրտ, աներես, ոչ մի կարգ ու կանոն չը ճանաչող ծառաներին եւ աղախիններին։ Քաղաքային վարչութիւններն էլ կարծես դիտմամբ փակում են աչքերը այս անօրմալ երեւոյթների առաջ եւ խոր քնի մէջ որոնում իրանց փրկութիւնը։ Այսպէս չէ քաղաքակրթված երկիրներում։ Մասնաւոր անձինք, կանայք անգամ, ձեռնարկում են միջոցների սոցիալական այս խորարմատ ցաւին որեւէ դարման անելու համար։

Այստեղ, Միացեալ-Նահանգներում, մեծ հրաչակ է վայելում տ. Սպրագ, որ միաժամանակ թէ հաշտարար դատաւոր է, թէ քաղաքացիական ամուսնութիւններ կատարող պաշտօնեայ։

Օր. Մ. Դանիելսօն, Չիկագոյից, միակ կինն է, որ պարապում է կաշուի արդիւնագործութեամբ։

Ամերիկայում առեւտրական մեծ տների տէր եւ կառավարիչ կանանց թիւը աճում է օրէցօր։ Գեղեցիկ սեռը այս մասնաճիւղի մէջ էլ ցոյց է տալիս ճարտարութիւն, եւ, որ ամենանհրաժեշտն է, վարչական տակտ ու հմտութիւն։

Իբրեւ պերճախօս օրինակ կարող է ծառայել տ. Լաբօրդ, որ երեսուն եւ հինգ ձիգ տարիներ վարում է, իր Bon-Marché հռչակաւոր տան ղեկը՝ Կովենգտոն քաղաքում։ Սրանից երեք տարի առաջ տ. Լաբօրդի տունը ամբողջապէս զոհ գնաց կրակի։ Առանց յուսահատ ողբերի եւ ապարդիւն սուգի մէջ ժամանակ կորցնելու՝ քաջարի կինը անմիջապէս չինել տուեց մի նոր, աւելի նպատակայարմար եւ աւելի կարգաւորված խանութ, քան առաջինն էր։ Տ. Լաբօրդի աղջիկը, մօր գլխաւոր օգնականը եւ պաշտօնեան, իր եռանդոտ գործունէութեամբ մեծ զարկ է տալիս գործերի առաջադիմութեան։

Այս եւ նման երեւոյթները այնչափ բազմաթիւ են եւ յաճախակի կրկնվող, որ հնարաւոր չէ դրանք ամբողջապէս նկարագրել։ Ամերիկան արդէն դարձել է մի ազգ, որ ամենայն ինչ գործնական է համարում։ Ամերիկան ամենայն ինչ գործնական է համարում։ Ամերիկան ամենայն ինչ գործնական է համարում։ Ամերիկան

զեմատօֆի ուպրավայի նախագահ Եվրէինով մասնացոյց արեց այն բանի վրա, որ այժմեան ցուցահանդէսը կը ստիպէ զէմստվոներին աւելի լուրջ ուշադրութիւն դարձնել տնայնագործական արդիւնաբերութեան զանազան ճիւղերի վրա։ Գաղանի խորհրդական Պոլովցեվ իր ճառի մէջ միւսատակեց այն ինքնուրոյն տաղանդը, ոուս անայնագործի հանճարը, որ այնքան պարզ կերպով երեւաց փակված ցուցահանդէսում։

—

Թիֆլիսի Արտիստական թատրոնում երկուշաբթի օրվանից սկսվեցին այն զաւեշտական ներկայացումները, որոնք կրում են Արտաթատրոն կամ «Сверхъ-Театръ» անունը։ Այնտեղ խաղացվում են ֆրանսիական եւ ռուսաց կեանքից վերցրած ծիծաղաշարժ վոդեվիլներ, որոնց մէջ մեծ դեր են խաղում երկումտքանի զանազան ակնարկներ մանաւանդ կանանց եւ ամուսնական յարաբերութիւնների մասին։ Բովանդակութիւնը շատ թեթեւ է եւ յաճախ բոլորովին զուրկ որեւէ իմաստից։ Հասարակութիւնը ծիծաղելու եւ ուրախ ժամանակ անց կացնելու նպատակով շտապում է դէպի թատրոն մի առանձին գժութեամբ։

—

Մանաւոր բանկերին կառաջարկվի չուտով կառավարութեան կողմից քչացնել պահեստի ընդունվող գումարների քանակութիւնը մինչ այն աստիճան, որ նրանք չը գերազանցեն բանկի դրամագլխի գումարներից աւելի քան երկուերեք անգամ։

—

Ռուսաստանում վերջին ժամանակ սկսել են տարածվել 500-ռուբլիանոց կեղծ թղթադրամներ։ Մասնաւոր անձինք խուսափում են 500-ռուբլիանոց թղթադրամներ ընդունելուց եւ գերադասում են 100 ռուբլիանոցները։ Վարշավայի կրեդիտային հիմնարկութիւնները, այդ թղթադրամներն ընդունելիս, գրում են նրանց թուահամարը։ Իսկ մասնաւոր բանկային գրասենեակներից մէկը մօտ օրերումս ստացաւ Վիէննայից 1200 հատ 500 ռուբլիանոց թղթադրամ, որ պետական բանկում փոխէ 100 ռուբլիանոցների հետ։

—

Վլադիկավկազի երկաթուղու ընկերութիւնը արդէն ձեռնամուխ է լինում հետախուզութիւններ եւ նախապատրաստական աշխատանքներ կատարելու՝ երկաթուղային գիծ կառուցանելու համար Սեւ ծովի Կովկասեան ափերի ուղղութեամբ։ Նոր ճանապարհը կը սկսվի Վլադիկավկազեան երկաթուղու Էնէմ կայարանից եւ կը հասնի մինչեւ Անդրկովկասեան երկաթուղու Նոր-Սինախի կայարանը։ Նրանից մի ճիւղ կը տարվի դէպի Մարկօպ, որ ապա կը շարունակվի մինչեւ Արմաւիր։ Նոր ճանապարհի շինութեան արժէքը հաշված է 50 միլիոն ռուբլի, երկարութիւնը—510 վերստ։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառում տարածուած Խալլու Մամեդը եւ իր անբաժան ընկեր Զվար-Իսային գնդակահար եղան իրանց հաւատակիցների հետ տեղի ունեցած կռվի միջոցին։ Այս այն արիւնածարաւ աւազակներն էին, որոնք անցեալ տարի Ղարագաղլու գիւղի ճանապարհին սպանեցին նոյն գիւղի տանուտէր Կարապետին։ Վերջինիս յանցանքը այն է եղել, որ Մամեդը կարծելիս է եղել թէ տանուտէրի խօսքովն է, որ իշխանութիւնը նրան հալածում է իբրեւ փախստականի։ Աւազակի Խալլուն այնքան է զայրացած լինում Ղարաղլու վրա, որ սպանելուց յետոյ վրան հազարներ է թափում այրում, ապա խլելով ձին եւ հրացանը՝ խրոխտաբար գնում մտնում է Ղարագաղլու գիւղը, տանուտէրի ընտանիքին յայտնում իր քաջագործութիւնը։ Եթէ հետեւեալ միջադէպը պատահած չը լինէր՝ յարմար առիթը չէր էլ գայ աւազակներին կամ սպանելու կամ ձերբակալելու, քանի որ նրանք պատրաստվում են իրանց ծանօթ եւ բարեկամ հաւատակիցների չրջանում։ Սպանութեան մանրամասնութիւնն հետեւեալն է։ Խալլու Մամեդի հօրեղբօր աղջկանը անպատված է լինում Դոզլար գիւղում ապրող մի պարսիկ։ Խալլուն լսում է այդ բանը, իր երկու ընկերներով դիմում է դէպի Դոզլար Թրքական գիւղը։ Հասնելով գիւղը՝ հրամայում է տանուտէրին որ առանց յետաձգելու իր մօտ բերեն իր հօրեղբօր աղջկանը անպատուողին։ Տանուտէրը խորամանկութեան է դիմում,—աւազակին յայտնում է որ պահանջած յանցաւորը լեռաստան եղած՝ երկիւղից կպել է տան պատին, ոտները թուլացած չէ կարողանում տնից դուրս գալ։ Եթէ ուզում է՝ ինքն մտնի տուն։ Աւազակապետն հրամայում է իր ընկերին, որ տուն մտնի անպատուողին այնտեղից դուրս հանէ։ Ընկերը հէնց որ փորձում է դուռը կիսով չափ բանալ՝ ներսից հրացանը պայթում է, եւ աւազակի դիակը փռվում է տան շեմքում։ Խալլուն հրամայում է իր ընկերոջ որ վերցնէ դիակը ու հեռանայ, իսկ ինքը մինչեւ ամբողջ գիւղը չը ջնջէ՝ չի հեռանալու։ Երկար ժամանակ հրացան պարպելուց յետոյ, երբ նկատում է որ դուրս եկող չը կայ, նա ժողովում է բաւականաչափ խոտ, ուզում է տունը կրակել։ այդ րոպէին դռան ծակից հրացանի մի դնդակ գետին է տապալում կատաղի աւազակին։ Այս տեղեկութիւնները լսել ենք ականատես պատմողներից. ասում են որ այդ կռվում դոզլարցիներից սպանվել է մի թուրք եւ ծանրապէս վիրաւորված են երկու թրքուհիներ։ Երկու ուրիշ կատաղի աւազակների էլ զատկի ուրբաթ օրը սպանել է գաւառիս առաջին մասի պրիստաւ Մարկոս բէկն։ Ի դէպ պիտի ասենք որ գաւառիս առաջին մասումը միայն ամառ ժամանակ ազատ չունչ է քաշում աղգաբնակութիւնը աւազակների ձեռքից։»

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 19-ին, Պետերբուրգի հայոց եկեղեցում՝ մի խումբ նկարիչներ հոգեհանգիստ կատարել տուեցին հռչակաւոր պրոֆէսօր Ե. Այվազովսկու յիշատակին, մահվան երկրորդ տարելիցի առիթով։ Ժամը 11-ին եկեղեցի էին հաւաքվել յարգողները, որոնց մէջ էին կայսերական կօնսերվատորիայի դիրեկտոր պրոֆ. Բերնհարդ, կոմպոզիտոր Իվերով, Կաղաչենկո, Ն. Կլենովսկիյ, Գլազունով. իսկ նկարիչներից ակադէմիկներ Մակովսկիյ, Կարազին, տիկին Նկարիչ Սամոկիշ-Սուդկովսկայա եւ ուրիշները։ Հասարակութիւնը բացառապէս գեղարուեստի մասնագէտներ էին. ներկայ էր եւ իշխան Աբամելիք Լազարեվ։ Հոգեհանգիստը վերջացաւ մօտ ժամը 1-ին։ Հետեւեալ օրը, ապրիլի 20-ին, Մ. Բասսովսկու ուսումնարանի դահլիճում երաժշտական երեկոյթ կար յանուն պրոֆ. Այվազովսկու. այդ երեկոյ երգեց օր. Ա. Աբրահամեանը, որ դեռ 1-ին տարին է, ինչ սովորում է Պետերբուրգի կօնսերվատորիայում. պ. Նալբանդեան նուագեց մի քանի կտորներ վիոլենչելի վրա աջող. պարոնը յայտնի վիրտուոզ Ջութակահար Յովհաննէս Նալբանդեանի եղբայրն է. Ջութակահար Մեէրսոնի միջի այլոց նուագեց կօնսերվատորիայի ուսանող Ե. Բաղդասարեանի հեղինակութիւններից երկուսը։»

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Զատկի ճրագալոյցին մեր հասարակութիւնը մի ճոխ սեղան էր պատրաստել այստեղի այն զինուորների համար, որոնք Կովկասի զանազան կողմերից եկած են այստեղ ծառայութեան։ Սեղանը պատրաստված էր տեղիս Գասպարեան անկեանոցում, իսկ տնտեսութիւնը յանձն էր առել պ. Ալէքսանդր Մկրտումեանցը։ Երբ արդէն հավաքված էին թիով մօտ 35 զինուորներ, բարբաստ վարդապետ Վարդազարեանցը ընկերութեամբ էմմանուէլ քահանայ Նազարեանցի օրհնեց սեղանը. հայր սուրբը մի կարճ խօսքով օրհնեց զինուորներին, որից յետոյ նստան սեղանի առնքը միասին։ Հայր սուրբը խմեց զինուորների կենացը եւ օրհնելով դուրս եկաւ։ Իսկ Նազարեանց քահանան թողնելով իր ընտանիքը, այդ երեկոն անց կացրեց զինուորների հետ, որպէս զի ուրախութիւն եւ բաւականութիւն պատճառէ նրանց։ Եւ իրաւ, այդպէս էլ եղաւ։ Հայ զինուորները շատ լաւ անց կացրին թաթախման երեկոն։»

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 17-ին Նոր-Նախիջեւանի հայ կանանց Աղքատախնամ ընկերութեան անդամների առաջին ընդհանուր ժողովը կայացաւ, նախագահութեամբ տ. Ի. Անանեանի։ Գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին վարչութեան անդամներ՝ Լ. Տրապիզոնցեան, Մ. Ա. Ալեանակի, Ե. Խոջայեան, Ի. Անանեան, Թ. Բողդանեան, Մ. Մ. Ալեանակի, Կ. Տրապիզոնցեան, Ս. Զալխուչեան, Կ. Ալաճալեան եւ Է. Սալթիքեան անձնափոխանորդներ՝ Բ. Քիրլեան, Շ. Խատամեան, Ս. Զուկայեան եւ Կ. Զախիրեան։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Քաղաքիս մէջ սկսել են վառել գազի լապտերներ, որոնք անհամեմատ լուսաւոր են։ Լապտերների անյարմարութիւնը այն է, որ տնկված են փողոցի կենտրոնում եւ կարող են սայլերից եւ կառքերից վնասվել. մանաւանդ շատ անյարմար են ամառ ժամանակ, երբ մեր գիւղացիները գերաններ են բերում ծախելու։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Կ. ՊՕԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

—

—Ապրիլի 6-ին տեղի ունեցաւ Պերայում նուագահանդէս յօգուտ ազգային հիւանդանոցի։ Այս տարի անդամ տարուընէ շատ աւելի կարգապահութիւն կը տիրէր՝ չնորհիւ կարգադիր մասխումբին ջանքերուն եւ ուշադրութեան։

«Տպուած հազար տոմակները նուագահանդէսէն քանի մը օր առաջ արդէն սպառած էին. եւ ժամը եօթին միջոցները խուռն բազմութիւն մը կը լեցնէր արդէն Բէթի-Շանի չքեղ թատերասրահը ու բոլոր օթեակները։ Պոլսոյ ամբողջ հայ հայ-լայֆէն, կամ եթէ կուզէք, tout le haut du panier-ն ներկայ էր, ներկայ էին նաեւ դեսպանական մարմինէն մէկ քանի ներկայացուցիչներ, եւ ուրիշ տեղացի եւ օտարազգի անձնաւորութիւններ։

«Նուագահանդէսին որոշուած ժամին բեմին քովընտիի մեծ օթեակին մէջ երեւցաւ քաղաքապետ Բարձր. Բրտվան փաշա, ինչպէս նաեւ Բերայի կառավարիչ Համտի պէյ, եւ անմիջապէս նուագախումբը հնչեցուց Համիտիէ քայլերգը, զոր ներկաները մտիկ ըրին յոտնկայս, եւ որուն աւարտելուն ամէն կողմէ ծափեր գոռացին։

Նուագահանդէսը իր ամբողջութեանը մէջ շատ գեղեցիկ ու շատ կանոնաւոր կերպով անցաւ, որուն համար կրնանք անշուշտ չնորհաւորել կարգադիր մասնախումբը։ Հասոյթը, նուագահանդէսին ծախքերը հանելէ ետքը, 900 ոսկիի մօտ է։

—Ազգային հիւանդանոցի նուագահանդէսին Կայս. հրամանը չնորհուելուն առթիւ խմբագրուած չնորհակալութեան ուղերձը, որուն համար գրած էինք թէ ս. Պատրիարքը կայս. պալատ պիտի տանէր, երէկ յանձնուեցաւ Բարձր. Բրտվան փաշայի։

—Վանայ մէջ բողոքականները առաջարկեր են ազգ. առաջնորդարանի, որ միացած հիւանդանոց մը բանան։ Այս խնդրոյն վրա գաւառային խառն ժողովը տեղապահին նախագահութեամբ գումարուելով, որոշեր է պատասխանել թէ կեդրոնական վարչութենէն այս մասին պէտք է հրահանգ ստանան եւ խնդիրը տեղեկագրեր են պատրիարքարան։ Երբ այս խնդիրը խառն ժողովոյ սեղանը ելլէ, հարկաւ նորէն ուշադրութեան առարկայ պիտի ըլլայ Սրուանձտեանց կտակով Վանայ մէջ հաստատելի հիւանդանոցի խնդիրը, եւ այս անդամ վերջնական ձեւ մը կը տրուի այդ գործին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսի լրագիրների ասելով. սուլթանի ֆլիգել-ադիւտանտ Տախիր-բէյ, որ իբրեւ թիւրքական նաւատորմի նաւերից մէկի հրամանատար գնում էր դէպի Տրիպոլիի ափերը՝ ճանապարհին փախաւ Մալտա կղզին եւ յայտարարեց իրան երիտասարդ թիւրքերի կուսակից։ Կ. Պոլսի բարձրագոյն դատարանը դատապարտեց այդ բանի համար Տախիր-բէյին զրկման բոլոր իրաւունքներից եւ բանտարկութեան։

—Նոյն լրագիրները հաղորդում են, որ մի հայ վարդապետ, Գասպարեան ազգանունով, 4 ուրիշ հայեր եւ մի հայուհի, Դիլբար անունով, բիթլիսեցի, դատապարտված են թիւրքաց քրէական դատարանի կողմից տաժանակիր աշխատանքների՝ «խռովարարների շարժման մասնակցելու համար»։

—«Journal» լրագրի ասելով, յայտնի վիպագրող Էմիլ Զոլա, որ այժմ գտնվում է Երուսաղէմում, ուսումնասիրում է Պալեստինի տեղագրութիւնը եւ նիւթեր է պատրաստում մի նոր բոմանի համար։

—«Européen» լրագիրը յիշեցնում է, որ մօտ օրերումս Հերբէրդ Սպէնսէր կը տօնէ իր ծննդեան 82-ամեայ յօբելեանը։ Այս առիթով եւրոպական լրագիրները հաղորդում են համառօտ կենսագրական տեղեկութիւններ ժամանակակից այդ նշանաւոր փիլիսոփայի մասին։ Սպէնսէր իր կրթութիւնն սկսել է իր հօր՝ դպրոցական մի համեստ ուսուցչի ղեկավարութեամբ։ Տասնեւեօթ տարեկան հասակում նա ընտրութիւն տուեց եւ ստացաւ քաղաքացիական ինժեների կոչումն։ Նրա առաջին գիրքը, որ մի ժողովածու էր զանազան յօդուածների, լոյս տեսաւ 1843 թ-ին։ 1843 թ-ից մինչեւ 1853-ը նա վարում էր «The Economist» լրագրի քարտուղարի պաշտօնը։ 1855 թ-ին լոյս տեսան նրա «Հոգեբանութեան հիմունքները»՝ չորս տարի առաջ քան Դարվինի «Տեսակների ծագումը»։ 1860-ից նա սկսեց աշխատել իր գլխաւոր՝ «Սինթետիքական փիլիսոփայութեան սիստէմները» հեղինակութեան վրա, որ աւարտվեց 1896 թ-ին եւ որը հռչակեց նրա անունը, որպէս մեր ժամանակի ամենայայտնի փիլիսոփաներից մէկի։

—«Al Mokhattam» լրագիրը հաղորդում է, թէ եգիպտական նախկին առաջին մինիստր Նուբար-փաշայի որդի Պողոս-փաշա Նուբարեան, որ մասնագիտութեամբ հաղորդակցութեան ճանապարհների ինժեներ է, նշանակվել է հասարակական աշխատանքների մինիստր Իբրահիմ Ֆուատ-փաշայի փոխարէն։

—Նիւ-Եորկից հաղորդում են «Rappel» լրագրին, թէ կենտրոնական Ամերիկայի հինգ հանրապետութիւններ դաշն են կապել միմեանց հետ, որով նրանք բոլորը միասին կազմում են մի ֆեդերատիվ միութիւն, պահպանելով մի եւ նոյն ժամանակ իրանց առանձին ինքնավարական իրաւունքները։ Սալվադորի, Գոնդուրասի, Կոստա-Ռիկայի, Նիկարագուայի եւ Գվատեմալայի կառավարութիւնները դաշնագրութեան մէջ ընդունում են պարտադիր միջնորդ դատարանի սկզբունքը։ Կը կազմվի մշտական միջնորդ դատարան իրաքանչիւր հանրապետութեան ներկայացուցիչներից։ Դատարանը հերթով նստաշրջաններ կունենայ ամեն մի պետութեան մայրաքաղաքում։ Կառավարութիւնները մի եւ նոյն ժամանակ պարտաւորվում են ընդհանուր ոյժերով դիմադրել արտաքին թշնամիներին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

29 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ Զենգեր ուղեւորվեց Մոսկվա։

ՊԷՆԶԱ. Пензенскія Губернскія Вѣдомости» լրագրում տպված է, թէ Թագաւոր Կայսրը ներքին գործերի մինիստրի զեկուցումից լսելով ազնուականների նահանգական պարագլխի հեռագիրը՝ որ արտայայտում էր նահանգի ազնուականների հաւատարիմ — հպատակական զգացմունքները՝ Բարձրագոյն բարեհաճեց հրամայել՝ չնորհակալութիւն յայտնել արտայայտված զգացմունքների համար։

ՊԵՏՐՕՎՍԿ. Պետրովսկի վրայով Շահը Բաքուից ուղեւորվեց Բաստավ։

ՎԱՐՇԱՎԱ. Ռուս-բելգիական մետաղագործական ընկերութիւնը Վարշավում դադարեցնում է իր գործը, որը անցնում է ֆրանսիական դրամատէրների ձեռքը։

ՊԱՐԻԶ. Լրացուցիչ ընտրութիւնների հետեւանքը։ Նախկին ընտրութիւնների թուերին աւելացնելով նոր ընտրութիւնների թուերը, կարելի է հաշուել, որ նորընտիր ժողովը բաղկացած կը լինի 50 պահպանողականներից, 50 նացիոնալիստներից, 99 հակամինիստրական հանրապետականներից, 111 հանրապետականներից, 129 արմատականներից, 90 արմատական-սոցիալիստներից, 43 սոցիալիստներից եւ 3 գետիստներից։ Ընդամենը 587 ընտրութիւն։

ՊԱՐԻԶ. Ընտրութիւնների մէջ Միլլերան յաղթեց նացիոնալիստ Պէչէնին։

ՊԱՐԻԶ. «Պակս» օդապարիկը ազատ շարժումներ էր կատարում. նրա վրա էին գտնվում Սեվեր եւ մեքենավարը։ Մէն փողոցի վրա յանկարծ նրա միջից բոց ժայթքեց եւ պայթիւն առաջացաւ. օդապարիկը գահավիժվեց գետին։ Նրա մէջ եղողները մեռած էին։

ՊԵԿԻՆ. Պէչիլեան նահանգից ստացված են տեղեկութիւններ, թէ Եուան-Շիկայի զօրքի գալուց յետոյ ազգակարարների խմբերը ցրվեցին։ Ապստամբների գիւղերը աւերված են։

ԼՕՆԴՕՆ. Սան-Դոմինգօ կղզու կառավարիչը հաղորդում է, թէ Մարտինիկէ կղզու վրա ոչնչացել են 40,000 մարդ եւ 19 նաւ։

ՆԻՒ-ԵՕՐԿ. Սանտա-Լուչիա կղզուց ստացված է հեռագիր, թէ Սուրբ Վիկենտիոս կղզու հիւսիսային մասը աւերված է լաւայի հոսանքով։ Սպանված մարդկանց թիւը հանում է 260-ի։

ՊՐԵՏՈՐԻԱ. Հաղորդում են, թէ Շաէյն նեղվում է աչքացաւից եւ ջղային համակարգութեան սաստիկ խանգարումից։—Բօէրների պատուիրակները սկզբում պահանջում էին անկախութիւն. բայց երբ անգլիական կառավարութիւնը մերժեց՝ նրանք պահանջեցին, որ ապստամբված աֆրիկանդէրներին ներում չնորհվի. անգլիական կառավարութիւնը դժուարութիւն չը յարուցեց։ Բօէրների պատուիրակները յոյս յայտնեցին, թէ ապստամբողների պատիժը կը սահմանափակվի՝ նրանց քաղաքացիական իրաւունքներից զրկելով։ Գլխաւոր կէտը, որը մերժեց անգլիական կառավարութիւնը՝ վերաբերում էր պայմանաժամ նշանակելուն՝ պատգամաւորական կառավարութիւն մտցնելու հարցում։ Բանակցութիւնները ընդհատվեցին, որովհետեւ պատուիրակները յայտնեցին, որ չեն ստացել բաւականաչափ լիազօրութիւն։ Նրանց ժամանակամիջոց է տրված մինչեւ մայիսի 15-ը։ Ուրեմն դոյութիւն չունի վստահութիւն, թէ բօէրների ղեկավարները անձնատուր կըլլենն։

ՎԻՍԲԱԴԷՆ. Կայսրը 10000 մարկ նուիրեց Մարտինիկէ կղզու վրա վնասվածների օգտին։

ՊԱՐԻԶ. «Սիւշէ» նաւի նաւապետը զեկուցա-

նում է, թէ Սէն-Պիէր ներկայացնում է այրվող աւերակների կոյտ։ Հրաբղխի ժայթքումները դեռ նշանաւոր են։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Սուրբ Վիկենտիոս կղզու վրա սպանվածների թիւը հասնում է 500-ի։—Պորտ դը Ֆրանսին վտանգ է սպառնում։

ՊԱՐԻԶ. Անգլիական թագաւորը 25,000 ֆրանկ ուղարկեց Մարտինիկէ կղզու վնասվածների օգտին։—Լրացուցիչ տեղեկութիւն են տալիս, թէ ընտրված են ոչ թէ 4, այլ 6 գեղիսներ։

30 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մամուլի գործերի գլխաւոր կառավարիչ ներգործական պետական խորհրդական իշխան Շախովսկոյ նշանակված է ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ, արձակվելով վարած պաշտօնից։—Պոլտաւայի նահանգապետ ներգործական պետական խորհրդական Բէլգարտ արձակված է վարած պաշտօնից, թողնվելով ներքին գործերի մինիստրութեան մէջ։—Գրոդնոյի նահանգապետ ներգործական պետական խորհրդական իշխան Ուռուսով նշանակված է Պոլտաւայի նահանգապետ։—Վարձատրվում է Վլադիմիրի երկրորդ աստիճանի շքանշանով Խարկովի նահանգապետ իշխան Իվան Օբոլենսկի գերազանց եւ եռանդուն գործունէութեան եւ օրինակելի կարգադրչութեան պատճառով՝ Խարկովի նահանգի Վալկովեան գաւառում անկարգութիւնները դադարեցնելու գործում։—Մայիսի 1-ին տեղի կունենայ Պարիզի ցուցահանդէսին մասնակցած անձերի նիստը՝ խորհրդակցելու համար նախագահ Լուբէին ուղերձ մատուցանելու մասին։—Տեղի ունեցաւ մայրաքաղաքի մամուլի ներկայացուցիչների խորհրդակցութիւն՝ գալիք ֆրանսիացի ծովագնացներին եւ ժուռնալիստներին պատուելու համար։ Վճռված է բանկէտ տալ։—Քաղաքացիական ճարտարապետների ընկերութեան մէջ կազմված է մասնաժողով՝ Շամախու համար շինութիւնների տիպար մշակելու նպատակով։—Լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ պ. Զենգեր ճառ արտասանեց Մոսկվայի համալսարանում։

ՊԼՕՑԿ։ Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչի, Եպոնիայի Օդու քաղաքում 1892 թուին սպառնացող վտանգից ազատվելու առիթով յունադաւան եկեղեցում եւ միւս դաւանութիւնների տաճարներում կատարվեցին գոհացողական մաղթանքներ։

ԽԱՐԿՕՎ։ Սկսվեցին իրաւաբանական մասնաժողովի քննութիւնները, Պետերբուրգի համալսարանի պրոֆէսոր Սերգէյեվիչի նախագահութեամբ։ Քննութեան ենթարկվելու համար մատուցված է 114 խնդիր։

ՎԻՍԲԱԴԷՆ։ Պետերբուրգից եկաւ Սրբազնագոյն Սինոդի օբէր-պրօկուրոր Կ. Պ. Պոբեդոնոսցեվ։

ՄՕՍԿՎԱ։ Հանգուցեալ Բասցվետով կտակել է Մոսկվայի համալսարանին 40,000 բուբլի՝ ստիպենդիաներ հիմնելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ԴԱՒԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հադէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենեբական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկովսկի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. Ռոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Ցպակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբոյժ), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ
Երեքշաբթի, մայիսի 7-ին, հայոց խմբի դերասան
Ո. ԱԲԻԼԵԱՆԸ
Մասնակցութեամբ օր. Ա. Խիթարեանի. բարեհաճ մասնակցութեամբ իշխ. Ս. Վ. Արղութեանի, Մ. Ց. Մէլիք-Կարագեօզեանի, Վ. Տ. Խանդամիրեանի, Ն. Լ. Օհանեանի. պ.պ. Մ. Ն. Աթաբէգեանի, Ա. Ց. Խատիսեանի, Ա. Ց. Մինասեանի, Ա. Մ. Շիրվանզադէի եւ Ա. Ս. Զըմբշկեանի
Կը ներկայացնէ
ԵՒԳԻՆԷ
Կոմեդիա 3 արար. հեղ. Ա. Մ. Շիրվանզադէի։
Սկիզբն է 8½ ժամին։
Տոմսակները վաճառվում են կասսայում։

ՊԵՍՏԻԳՕՐՄԿ
ԲԺԻՇԿ Ք. ԳԱՆԶՈՒՄԵԱՆ
Ընդունում է հիւանդներին բոլոր տարին
Առաւօտեան . . . . . 9½—12
Երեկոյեան. . . . . 5 — 7
(Չ. Շ.) 1—16

Ա. Տ. Ա. Մ Ն Ա. Բ Ո Ց Ժ
Կ. ԿԷՕՆՃԵԱՆ
փոխադրվել է Երեւանեան հրապարակ, տուն Գուրգենովի (Սօլոլակսկայա փողոցի անկիւն)։
Ընդունում է հիւանդներին առաւօտեան 8—2, երեկոյեան 5—8 ժամին.
10—25

Լոյս տեսաւ
Ազգագրական Հանդէսի
VII եւ VIII գրքերը միացած
Բովանդակութիւն.—Ս. Շահ-Ազիզ՝ Նոր-Նախիջեւանը եւ Նոր-Նախիջեւանցիք։—Արեղեան՝ Թլուատ-Դաւիթ։—Քաջբերունի՝ Հայկական սովորութիւնները.—Օր. Վարդ. Ցովսէփեան՝ Ռոստամ-Զալ։—Ե. Լալայեան՝ Գանձակի գաւառ։ Ե. Լալաեան՝ Բորչալուի գաւառ։—Նժդեհեան՝ Ալաշկերտ։—Հ. Ղ. Ալիշան։—Բժ։ Բ. Նաւասարդեան՝ Ա. Երիցեան։ Կարա-Մուրզա։ Տնայնագործների ժողովը։—Գրախօսութիւն՝ Տերսիմ Ստ. Մալխասեան։—Ս. Գիրք՝ Ծրագիր սեփականութեան նշանների մասին նիւթեր հաւաքելու։»
26 պատկեր, մեծ մասը առանձին թերթի վրա տպված եւ Բորչալուի գաւառի հինգ վերստանոց քարտէզը։
Գինն է 3 ր.
Բացված է IX եւ X գրքերի բաժանորդագրութիւնը
Բաժանորդագրին է 3 ր.
Դիմել՝ Ерванду Лалаянцъ. Тифлисъ. Саперная. 5, կամ Семинарія Нерсисянъ.
3—3

ՇՈՒՇԻ
Ատամնաբոյժ Շ. Բ. Արօնի
մշտական ատամնաբուժական կաբինէտ։
Ընդունելութիւնը առաւօտեան ժամը 10-ից մինչեւ 2-ը եւ երեկոյեան 4-ից մինչեւ 7-ը։
5—8

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնէ նոր վէպիկ
ԽՈՐՏԱԿՎԱԾ ՍԷՐ
ՑՍՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՑԵԱՆԻ
Այժմեանից ընդունվում է բաժանորդագրութիւն։ Հարցնել «Տարազի» խմբագրատանը։ (Ольгинская ул.) Ե. Ս. 3—3

ԳՆՈՒՄ ԵՄ
պօստային մարկաներ (բանեցրած) Պարսկաստանի եւ Տաճկաստանի։ Դիմել՝ Баку, Мирза-Авакову, Михайловская, 8. Կամ Bacou, Mirza-Awakoff, rue Mikaïlowski, 8։ 9—10

Առաջնակարգ հիւրանոց
„ԱՎՐՕՐԱ“
(Նախկին Բաղժիի)
Նոր բացված
Թիֆլիսի կենտրօնում, Միքայէլեան հրապարակ, № 29 իշխան Վօրոնցովի արձանի մօտ։
Համարները՝ սկսած մի բուբլուց։
Ճաշարան. պարտէզ.
Խոհանոցը՝ ֆրանսիական եւ տեղական։
Գինիներ՝ արտասահմանեան եւ տեղական։
Հիւրանոցում կայ վաննա եւ դուշ։
Տելեֆոն № 800։
(Ե. Հ. Կ.) 6—10

Քուրայիսի քաղաքային ջրանցքի եւ էլէկտրական տրամվայի ընկերութիւնների վարչութիւնը,
ի նկատի ունենալով, որ հասնում է պայմանաժամը (ներկայ տարվայ մայիսի 1-ին), երբ պէտք է մտցնվեն Ընկերութեան I եւ II սերիաների անդորրագրերի նախնական վճարները, որանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ հերթական վճարները կընդունվեն Քութայիսում, Ընկերութեան գրասենեակում, նոյնպէս եւ Քութայիսի Փոխադարձ Կրէդիտի Ընկերութեան մէջ եւ Թիֆլիսում—Գիւղատնտեսական փոխադարձ կրէդիտի ընկերութեան մէջ։ Ընկերութեան իսկական եւ սկզբնական (111 սերիայի) փայական անդորրագրերը կարելի է ստանալ Քութայիսում—1) Ընկերութեան Գրասենեակում, 2) Փոխադարձ Կրէդիտի Ընկերութեան Վարչութեան մէջ, 3) Միխայլովկի Ազնուական Կարուածական բանկի կասսիրի մօտ եւ 4) Մարգանէցաարդիւնաբերողների Համաժողովի Խորհրդի քարտուղար Ա. Տ. Նանէյշվիլի մօտ. Թիֆլիսում—1) Գիւղատնտեսական Փոխադարձ Կրէդիտի Ընկերութեան Վարչութեան մէջ եւ 2) Ընկերութեան Վարչութեան անդամների՝ իշխան Ռ. Տ. Ամիրէյիբիի, Ա. Ա. Բաբովի, եւ իշխան Գ. Ն. Դիւսամիձէի մօտ. Բաթումում—Փոխադարձ Կրէդիտի Ընկերութեան Վարչութեան մէջ. Փոթիում—Փոխադարձ Կրէդիտի Վարչութեան մէջ եւ Զիատուրիում—Մարգանէցա-արդիւնաբերական Փոխադարձ Կրէդիտի Վարչութեան մէջ։ 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ
Գտնվում է ֆինանսների մինիստրութեան իրաւասութեան տակ։ Ուսումնարանը հիմնված է Թիֆլիսի վաճառականական դասակարգից. դասընթացը եռամեայ է։ Առաջին դասարանը ընդունվում են առանց քննութեան քաղաքային ուսումնարաններում աւարտած աշակերտները (1872 թ-ի կանոնադրութեան համաձայն)։ Ուսման վարձը տարեկան 80 բուբլի է։
Դասընթացքը աւարտողների իրաւունքները.—անձնական պատուաւոր քաղաքացու կոչումն հինգ տարի առեւտրական հիմնարկութիւնների մէջ ծառայելուց յետոյ։ Պետական ծառայութեան մէջ՝ քաղաքացիական առաջին աստիճան ստանալու իրաւունք, առանց քննութեան։ Զինուորագրութեան մէջ—երկրորդ կարգի արտօնութիւններ։
Ուսումնարանը կը բացվի 1902 թ-ի սեպտեմբերի 17-ին։ Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 18-ին։ Ուսումնարանի ընակարանը—Նիկոլաեւսկայա հրապարակ, № 23, տուն Զաւրիեւի։
Խնդիրքները—մետրիկական, կոչման եւ ծաղկի պատուաստման վկայականների հետ միասին ընդունվում են Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում ամենայն օր մինչեւ օգոստոսի 1-ը։
Ուսումնարանը ժամանակաւորապէս կառավարում է Թիֆլիսի առեւտրական դպրոցի տնեսուցիչը։ 6—7

— Кто говоритъ?
— Зубной врачъ, д-ръ Маннъ. Я говорю съ Т-вомъ Р. Кёлеръ и К°?
Да, что вамъ угодно?
— Пришлите мнѣ, пожалуйста, опять нѣсколько флаконовъ „Кёлерской душистой воды“; она очень хорошо дѣйствуетъ, какъ укрѣпляющее и освѣжающее средство при зубныхъ операціяхъ.
КЁЛЕРСКАЯ ДУШИСТАЯ ВОДА
отнюдь не есть какое-нибудь подражаніе одеколону (Eau-de Cologne), а представляетъ собою совершенно самостоятельное, вполнѣ оригинальное по составу издѣліе. ПРЕИМУЩЕСТВА его: несравненно большая крѣпость и большее содержаніе ароматическихъ началъ, удачная комбинація которыхъ проявляетъ особенно благотворное укрѣпляющее и освѣжающее дѣйствіе.
Ароматъ настолько стоекъ, что держится въ платкѣ или въ платьѣ по нѣсколько дней.
ПРОДАЖА ВЕЗДѢ ВЪ ЛУЧШИХЪ МАГАЗИНАХЪ.
Е.НИКОЛЬСКІЙ

Թիֆլիսի Կենտրօնական Գրավաճառանոցում
վաճառվում են՝
ՀՐԱՏ. ԻՇԽ. Մ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ, Պատկերազարդ այբուբէն, կուբիկների վրա, թղթէ արկղիկով։ Թիֆլիս, 1902 թ. գ. 1 ր.
ԱՐԾՐՈՒՆԻ Վահ. բժ., Վարակիչ հիւանդութիւնները եւ նրանց թոյնը, պատկերազարդ, Թիֆլ. 1902 թ. գ. 15 կ.
ՃՈՒՂՈՒՐԵԱՆ Ցար. քահ., Գիւղի այրին, Թիֆլ. 1902 թ. գ. 15 կ.
ՄՈՃՈՒԵԱՆՑ Պ., Սրտի վէրքերը (արձակ բանաստեղծութիւններ), Ալէքս. 1901 թ. գ. 10 կ.
ԼԱԼԱՑԵԱՆ Եր., Ազգագրական հանդէս, պատկերազարդ, վեցերորդ տ. VII—VIII գրքեր 1901, Թիֆլիս, գ. 3 ր.
Դիմել Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (տ.) 2—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ
XVIII ԴԱՐ
Առաջին մաս
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ
Ծախվում է. հեղինակի մօտ, «Ս՝չակի» խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ Редакція Мшакъ“. «Գուտտենբէրգ» գրաւաճառանոցում։ Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“.
Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները։ Գինը 1 բուբլի 50 կոպէկ։

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները ալ չհանցան—
Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան
ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ
Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈԽՈՒՄ, կարամէլ «ԻՒԲԻԼԷՅՆԱՅԱ» եւ առհասարակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։
Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։
(Հ. Կ.)
41—100

Дозволено Цензурою, Тифлисъ. 30 Апрѣля 1902 г.
Электропечатня Груз. Издат. Т—ва. Ь. Ванская ул.